

**1991Թ. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ
ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ***

Նժդեհ Հոկտեմբյան

Բանալի բառեր՝ նախագահական ընտրություններ, Հայաստանի երրորդ հանրապետություն, հետխորհրդային տրանսֆորմացիա, ԽՍՀՄ փլուզում, քաղաքական կուսակցություններ:

ՆԱԽԱՐԱՆ

1991թ. անկախության ձեռք բերմանը զուգահեռ՝ բազմակուսակցական համակարգի հաստատման կարևորագույն քայլը Հայաստանում իշխանության ձևավորումն էր ժողովրդավարական ճանապարհով: Ժողովրդավարության հաստատման ճանապարհին, բնականորեն, բազմակուսակցական համակարգի զարգացման հաջորդ արարը գործադիր և օրենսդիր իշխանությունների տարանջատումն էր: Անկախության շրջանի հայաստանյան քաղաքական ընտրախավը հարցի լուծումը տեսավ Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնի ներմուծման ճանապարհով: Հարկ է արժանագրել, որ նախագահական պաշտոնի համար ներհայաստանյան մրցավազքն իսկապես համահունչ էր բազմակուսակցականության սկզբունքներին: Երբ հաշվի ենք առնում, որ երկրում այլևս գործունեություն էին ծավալում տասնյակ կուսակցություններ, որոնցից յուրաքանչյուրն էլ ուներ իր ընդգծված քարիզմատիկ առաջնորդը, պարզ է դառնում, թե որքան բազմերանգ էր քաղաքական պայքարը: Բնականաբար, միջկուսակցական հարաբերությունների հստակեցման ու նոր հարաբերակցության հաստատման համար թերևս անհնար էր ավելի համապատասխան առիթ լինտրել, քան Հայաստանի առաջին նախագահական ընտրություններն էին:

Ըստ էության, բազմակուսակցական համակարգի շրջանակներում միջկուսակցական հարաբերությունների ճշգրտման հրաշալի հարթակ դարձան նույն տարվա հոկտեմբերի 16-ին կայացած նախագահական ընտրությունները: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991թ. հունիսի 25-ին որոշում էր կայացրել հիմնելու նախագահի պաշտոն, որի համար ընտրությունը պիտի կայանար մինչև 1991թ. դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ քաղաքացիների ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ:[1] Նախագահի պաշտոնի ստեղծումը բխեցվում էր անկախության հռչակագրի ըմբռնումից, ըստ որի՝ իշխանության կազմակերպման հիմքում պետք է դրվեր դրա տարանջատման սկզբունքը:[2] Վերջապես, խնդիրն առնչվում էր նաև երկրում ձգնաժամային կառավարման իրավիճակին, որից բխում էր պաշտոնի պահպանումն ու ուժեղացումը:[3] Բազմակուսակցական համակարգի պայմաններում հայ ժողովուրդն իր ողջ պատմության ընթացքում առաջին անգամ ուղղակի ընտրության միջոցով ընտրում էր հանրապետության նախագահ: Իրենց աննախադեպությամբ հանդերձ՝ նախագահական ընտրություններն ընդգծվում էին մեկ այլ հատկանշական հանգամանքով: Դրանց մասնակցում էին քաղաքական կողմնորոշումներ ներկայացնող քաղաքական կուսակցությունները՝ իրենց կողմից առաջադրած թեկնածուներով: Եթե Առաջին հանրապետության, ապա և ՀԽՍՀ-ում երկրի ղեկավարությունն իրականացվում էր խորհրդարանական կառավարման եղանակով,

* Հոդվածն ընդունվել է 05.02.2017:
Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Է.Մինասյանը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

արդեն 1991թ., նախկին խորհրդային հանրապետությունների օրինակով, հիմք էր դրվում կառավարման նոր համակարգի, որտեղ իրենց դիրքը հստակեցնելու համար պիտի պայքարի դուրս գային տարբեր զաղապարական հենք և համոզմունքներ ունեցող կուսակցություններ։[4] Օրինաչափորեն թե ոչ, խորհրդային «համայնավարության ու զանգվածների ամենակարողության» մասին կարգակոչերից հիասթափված հայ ժողովուրդն ու նրա նորահայտ քաղաքական ընտրանին պիտի հայացք ձգեին դեպի կառավարման ու քաղաքական համակարգի ձևավորման հակառակ կերպին։ Ի վերջո, 1990-91թթ. հանրապետությունում դասական իմաստով ոչ նախագահական, ոչ էլ խորհրդարանական կառավարում էր, ինչը շփոթությունների և մասնավորապես՝ պատասխանատվության տարորոշման լուրջ տեղիք էր տալիս։ Եվ հենց թրծված կուսակցությունների բացակայությունն էլ ընտրախափ մեծամասնությանը հակում էր նախագահական համակարգի կողմը։[5]

ՄԻԶԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ

Ըստ էության, նախագահի պաշտոնի հիմնական հավակնորդները ելնում էին իրենց կուսակցությունների քաղաքական կշիռը ու տիրակալյաժ դիրքերից։ Տասնամյակներով երկրի քաղաքական մենաշնորհին տիրապետող Կոմունիստական կուսակցությանը լուրջ մարտահրավեր նետած, խորհրդարանում զգալի տեղեր նվաճած և Հանրապետության ղեկավարությունը ստանձնած Հայոց համազգային շարժումը նախագահական ընտրություններում առաջադրեց ՊԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը։ Որպես փոխնախագահի թեկնածու՝ Տեր-Պետրոսյանի հետ պիտի քվեարկվեր ՊԽ նախագահի տեղակալ, նախկինում ՀԿԿ կենտկոմի սոցիալ-տնտեսական բաժնի վարիչ, ԿԿ նախկին առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի առաջին օգնական Գագիկ Հարությունյանը։[6] Շեշտելի է, որ Տեր-Պետրոսյանը հանդես էր գալիս թե՛ համաժողովրդական շարժումն առաջնորդող կուսակցության, թե՛ իր անձնական՝ երկրի ներսում և արտերկրում վայելած բարձր հեղինակության դիրքերից։[7] Եվ սա, անշուշտ բնական էր, քանզի նա, լինելով «Ղարաբաղ» կոմիտեի առանցքային անդամներից մեկը, արդեն ավելի քան մեկ տարի էր, ինչ զբաղեցնում էր հանրապետության առաջին դեմքի կարգավիճակը։[8] Ուշագրավ է, որ ՀՀԸ-ի ներկայացուցիչը լինելով հանդերձ՝ Տեր-Պետրոսյանի հաջողության գրավականը զգալիորեն կապված էր ժողովրդի մեջ նրա անձի ընկալումից։ Վերջապես, մեկ տարվա ընթացքում Տեր-Պետրոսյանը հաստատուն կապեր էր ստեղծել թե՛ Խորհրդային միության հանրապետությունների ղեկավար շրջանակների, թե՛ արևմտյան երկրների քաղաքական վերնախափի ներկայացուցիչների հետ։[9]

Այս համատեքստում լիովին օրինաչափ էր Տեր-Պետրոսյանի՝ ընտրություններում հաղթողի ամենաիրական հավակնորդը լինելու պարագան։ Ընտրություններին Տեր-Պետրոսյանը մասնակցեց որպես իշխանության ներկայացուցիչ և նրա օգտին կատարված քվեարկությունը, ինչ-որ իմաստով, նաև գնահատական էր փաստացի մեկամյա անկախությանը։ Լևոն Տեր-Պետրոսյանին համարելով համազգային թեկնածու՝ նրան սատարելու կոչով հանդես եկավ նաև սփյուռքի հայ ավանդական քաղաքական կազմակերպություններից Ռամկավար ազատական կուսակցությունը՝ ընդգծելով, որ թեև սփյուռքահայությունը չի կարող մասնակցել քվեարկությանը, սակայն կուսկացությունն արտահայտում է «սփյուռքահայ զանգվածների զգացումները»՝ Լևոն Տեր-Պետրոսյանին թիկունք կանգնելով։[10] Նկատելի է, որ ՀՀԸ-ի թեկնածուին ավելի վաղ պաշտպանեց նաև Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը։ 1991թ. սեպտեմբե-

րի 9-ին ՀՈԱԿ հանրապետական վարչության համապատասխան որոշմամբ՝ կուսակցությունն իր կողմից հանրապետության նախագահի թեկնածու էր առաջադրում Լևոն Տեր-Պետրոսյանին: [11]

Արձանագրելի է, որ Լևոն Տեր-Պետրոսյանն ու Պապիկ Հարությունյանը նախընտրական քարոզարշավ, որպես այդպիսին, չվարեցին: ՀՀ-ի երկուսուկես տարվա գործունեությունն ինքնին խոսում էր ընտրություններում այս քաղաքական ուժի գաղափարների ու հայացքների փոխարեն: Այդ հանգամանքով էլ պայմանավորված՝ Տեր-Պետրոսյանը հասարակության դատին չներկայացրեց իր նախընտրական ծրագիրը: Ըստ նրա՝ իր օգտին քվեարկելիս ընտրողներն առաջնորդվել են ոչ թե խոստումների ու գեղեցիկ ծրագրերի առկայությամբ, այլ արդեն իսկ կատարվածի գիտակցությամբ: [12] Խուսափելով մյուս թեկնածուների հետ բանավեճի մեջ մտնելուց և նախընտրելով զսպվածությունը՝ նա չներքաշվեց հակարշավի մեջ: [13]

Հարկ է հավելել, որ նախագահական ընտրություններին ինքնառաջադրվել էր նաև Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը, որի փոխնախագահի թեկնածուն Պետ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ղափիս Վարդանյանն էր: Հատկանշական է, որ քաղաքական կապիտալի և նախագահական ընտրարշավի հաջողության ապահովմանն էր միտված Մանուկյանի և Վարդանյանի համատեղ ջանքերով ՀՀ-ից անջատ նոր ուժի՝ Ազգային ժողովրդավարական միության ստեղծումը: Հետագայում՝ 1990-ական թթ., ԱԺՄ-ն դարձավ հայաստանյան քաղաքական ամենաազդեցիկ կուսակցություններից մեկը: Ի հեճուկս 1996թ. նախագահական ընտրություններում ՀՀ-ին լրջագույնս նետված մարտահրավերի՝ կուսակցությունն այնուհետ բռնեց անկման ուղին՝ 2001թթ. դաժան պառակտման ենթարկվելով: Ինչևէ, 1991թ. սեպտեմբերի 26-ին Վ. Մանուկյանը Պետրոսյան խորհրդին ներկայացրեց իր հրաժարականը վարչապետի պաշտոնից՝ միաժամանակ նահանջելով նախագահական ընտրություններում քվեարկվելուց: Մանուկյանն իր հրաժարումը բացատրում էր քաղաքական պայքարը չթեժացնելու և Հայաստանում քառսային վիճակ չստեղծելու մտահոգությունից ելնելով: [14]

Հանրապետությունում քաղաքական զգալի կշիռ ունեցող կուսակցություններից մյուսը՝ Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), նորանկախ Հայաստանի առաջին նախագահական ընտրություններում առաջադրել էր կուսակցության նախագահ Պարույր Հայրիկյանի թեկնածությունը: Հայրիկյանը, լինելով խորհրդային շրջանի ամենահայտնի այլախոհներից մեկը, մեծագույն համբավ էր ձեռք բերել ամբողջատիրական համակարգի դեմ իր բազմամյա պայքարով: Նա ընդհանուր առմամբ 17 տարի էր անցկացրել խորհրդային բանտերում՝ հետամուտ լինելով Հայաստանի անկախության գաղափարի իրականացմանը: [15] Պ. Հայրիկյանն ուներ կուսակցական-կազմակերպչական աշխատանքի զգալի փորձ՝ 1967 թվականից մասնակիցը լինելով Ազգային միացյալ կուսակցության կազմավորմանը, ինչպես նաև արդեն 1987թ. հիմնելով ԱԻՄ-ը: [16] Խորհրդային իշխանությունների հարուցած զանազան խոչընդոտները Հայրիկյանին տևական ժամանակ զրկել էին հայրենիքում գործելու իրավունքից, և միայն հանրապետությունում ժողովրդավարական կարգերի ներմուծումը հնարավոր դարձրեց նրա վերադարձը: Հարկ է ավելացնել, որ Պարույր Հայրիկյանը նշյալ պատմափոխում ՀՀ վարչության անդամ էր լինելով ԱԻՄ նախագահ: ՀՀ-ի կազմում իր լինելը նա բացատրում էր ԱԻՄ-ի չկայացավածությամբ և ՀՀ-ի՝ ԱԻՄ-ացման հավանականությամբ: Նա հակված էր կարծելու, որ ՀՀ-ի ճիշտ զարգացման ուղին պիտի անցներ «Ղարաբաղ» կոմիտեից ձերբազատվելով ու ԱԻՄ-ի պես «ազգային-քաղաքական

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

լուրջ կազմակերպություն» դառնալով: [17] Թերևս ՀՀ-ի հետ առաջանալու բոլորատեսակ հնարավորությունների վերջնական խորտակումից հետո Հայրիկյանը նախընտրեց կենտրոնանալ սեփական քաղաքական ուժի կայացման գործի վրա՝ դրա ճանապարհներից մեկն էլ համարելով Հանրապետության նախագահի ընտրություններին մասնակցելը:

Պարույր Հայրիկյանը նախագահական առաջին ընտրությանը որպես թեկնածու առաջադրվեց ԱԽՄ-ի նախագահի կարգավիճակով, իսկ ահա փոխնախագահի համար իր հետ քվեարկության ներկայացրեց Հայաստանի քրիստոնեա-ժողովրդավարական միության նախագահ Ազատ Արշակյանին: [18] Սեպտեմբերի 27-ից մեկնարկած նախընտրական ամբողջ քարոզարշավում Հայրիկյանը քննադատում էր ՀՀ-ին ու իշխանության թեկնածուներին՝ շեշտելով հատկապես անկախության հասնելու գործում վերջիններիս թույլ տված վրիպումները: Նրա կարծիքով՝ նախագահական ընտրություններն էին լինելու այն վճռորոշ կետը, որից պիտի մեկնարկեր անկախության ամրապնդման գործը: [19] Անտարակույս, նա իրեն էր տեսնում այդ գործը հավուր պատշաճի կազմակերպելու ունակ միակ գործչի դերում՝ որպես «անկախության առաջնորդի»: [20]

Նախագահի ընտրությանն իր մասնակցությունը բերեց նաև հայ ավանդական կուսակցություններից Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ): Վերջինս Առաջին հանրապետության անկումից հետո հարկադրաբար լքել էր Հայաստանը և իր գործունեությունը ծավալում էր սփյուռքահայ գաղթօջախներում: 1988թ. մեկնարկած Արցախյան շարժման անմիջականորեն մասնակից չլինելով՝ ՀՅԴ-ն հայաստանյան իրողություններին հարմարվելու խնդիրը սկսեց լուծել արդեն 1990թ. օգոստոսից, երբ կուսակցությունը հայտարարեց հայրենիքում իր կազմակերպական ներկայությունն ապահովելու մտադրության մասին: ՀՅԴ-ն ստեղծեց իր Կենտրոնական կոմիտեն, հիմնեց պաշտոնաթերթն ու մամուլ կենտրոնը: [21]

Ներքաղաքական պայքարում ՀՅԴ-ն պարտավոր էր, իր ինքնուրույնությունն ի ցույց դնելով՝ մասնակցել բազմակուսակցական համակարգի հաստատումից ի վեր առաջին համաժողովրդական ընտրությանը: Հ.Յ. Դաշնակցության Բյուրոյի և Հայաստանի Կենտրոնական կոմիտեի 1991թ. օգոստոսի 21-ին կայացած համատեղ նիստում որոշվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն» հասարակական-քաղաքական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրել սիրված դերասան, «Հայ ազգային միություն» հասարակական կազմակերպության նախագահ Սոս Սարգսյանին: [22] Ընդգծելի է, որ կուսակցությունը, դեմ լինելով կառավարման նախագահական համակարգին, այդուհանդերձ, մասնակցեց նախագահի ընտրությանը՝ գիտակցելով դրանց կարևորությունը հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի զարգացման համատեքստում: Նախագահական պաշտոնական ընտրարշավի ժամանակահատվածի մոտենալուն զուգահեռ նաև հայտարարեց փոխնախագահի իր թեկնածուին՝ ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի անդամ Վահան Հովհաննիսյանին: Միննույն ժամանակ նախագահ ընտրվելու ոչ այնքան բարձր հնարավորությունները հաշվի առնելով՝ ՀՅԴ-ի թեկնածուն գործընթացին ներգրավվեց ժողովրդավարության ամրապնդման միտվածությամբ՝ մեկ թեկնածուի ընտրապայքարում միայնակ չթողնելու շահագրգռվածությամբ: [23] Նկատենք, որ Ա.-Սարգսյանն ու ՀՅԴ մյուս ներկայացուցիչները Հայաստանի մարզերում ընտրողների հետ ունեցած հանդիպումների ընթացքում պարզաբանում էին կուսակցական սկզբունքները, իդեալները, դիրքորոշումն ու քաղաքական ծրագրերը: Այդ շարքում առանցքային տեղ էր զբաղեցնում իշխանության և մասնավորապես՝ ՀՀ-ի հետ ունե-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ցած գաղափարական հակադրությունը, մասնավորապես՝ քաղաքական տեսլականը անկախության հիմնախնդրի, Արցախի հարցի, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ոլորաններում: [24]

Նախագահական ընտրություններին մասնակցեց նաև Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ)՝ որպես թեկնածու առաջադրելով կուսակցության առաջնորդ Աշոտ Նավասարդյանին: ՀՀԿ-ի նախագահական թեկնածուի հետ որպես փոխնախագահ առաջադրվեց Սահմանադրական իրավունք միության (ՍԻՄ) նախագահ Հրանտ Խաչատրյանը: [25] Նավասարդյանի ու Խաչատրյանի քաղաքական ծրագրերը առնչվում էին «ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի» կերտման գաղափարին՝ ընդգծելով ՀՀԸ-ի թեկնածուի հետ իրենց ունեցած գաղափարական անհամաձայնությունները: Ավելացնենք, որ նախագահական ընտրություններին մասնակցեցին նաև ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Ջորի Բալայանը (փոխնախագահության թեկնածու՝ Հարություն Մարգարյան) և «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Ռաֆայել Ղազարյանը (փոխնախագահության թեկնածու՝ Սուրեն Ջոյան): [26] Հետաքրքիր է, որ Ռ. Ղազարյանն ու Ս. Ջոյանը հետագայում ձևավորեցին Հայաստանի գիտաարդյունաբերական և քաղաքացիական միությունը՝ մասնակցելով 1995 և 1999 թթ. խորհրդարանական ընտրություններին:

Բազմակուսակցական համակարգի ներդրումից հետո առաջին համաժողովրդական ընտրություններում նախընտրական պայքարը ընթանում էր լուրջ մեկ ուղղությամբ: Ընդդիմադիր կուսակցությունները քննադատում էին Գև նախագահի ու նրան սատարող կուսակցության քաղաքական գիծը՝ առավելապես կենտրոնացնելով իրենց ուշադրությունը հանրապետության սոցիալ-տնտեսական դժվարին իրավիճակի, հայ-թուրքական հարաբերությունների զարգացման և Արցախի հարցում ունեցած դիրքորոշման հիմնահարցերի վրա:

Հարկավ, ՀՀԸ-ի ներկայացուցիչների և մյուս կուսակցությունների ներկայացրած թեկնածուների միջև քաղաքական ռեսուրսների հարաբերակցությունը նույնպիսին չէր: Տեր-Պետրոսյան-Հարությունյան զույգը հանդես էր գալիս իշխանության կարգավիճակով՝ դրանից բխող դրական և բացասական հետևանքներով: Եթե նրանք ունեին քաղաքական հսկայական բազա և երկուսուկես տարվա համար ու հաջողությամբ պսակված քաղաքական պայքարի փորձ, ապա մյուս թեկնածուները հասկանալիորեն չունեին հանրային նույնանման ներկայացվածություն կամ ձանաչվածություն: Ուստի իշխանության թեկնածուի՝ նախընտրական քարոզչություն չիրականացնելու որոշումը կարող էր և հնարավորություն հանդիսանալ նախագահության մյուս հավակնորդների համար՝ ազատորեն և անկաշկանդ կերպով հաղորդակցվելու ընտրողների հետ՝ ելնելով հավասար մրցակցության սկզբունքից:

1991թ. հոկտեմբերի 16-ին կայացան նախագահական առաջին ընտրությունները, որոնց մասնակցեց ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ավելի քան 72 տոկոսը: Հայաստանի առաջին նախագահ ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ ստանալով քվեարկողների ավելի քան 83 տոկոսի աջակցությունը, իսկ ՀՀ փոխնախագահ դարձավ Գագիկ Հարությունյանը: [27] ՀՀԸ-ի թեկնածուին կողմ էր քվեարկել 1.260.433 քաղաքացի, դեմ՝ 209.417: Երկրորդ տեղում հայտնվեց ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը՝ 7.2 տոկոս կամ 109.438 կողմ և 1.360.412 դեմ ձայներով: Հայ հեղափոխական դաշնակցության թեկնածու Սոս Սարգսյանը ստացավ 4,33 տոկոսի աջակցությունը՝ 65.757 կողմ և 1.404.093 դեմ: Ջորի Բալայանը ստացավ 0,45 տոկոս ձայն (կողմ՝ 6.899, դեմ՝ 1.462.951), Ռա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Ֆայել Ղազարյանը՝ 0,39 (կողմ՝ 5.941, դեմ՝ 1.463.909), իսկ ՀՀԿ-ի նախագահ Աշոտ Նավասարդյանը՝ 0,16 (կողմ՝ 2.467, դեմ՝ 1.467.383): [28] Նախագահի բազմակուսակցական ընտրությանը հաջորդեց արդեն ԳԽ նախագահի նույնանման, բայց մի քանի փուլերով կայացած ընտրությունը, որին մասնակցում էին ՀՅԴ-ից՝ Մելխակ Գաբրիելյանը, ԱժՄ-ից՝ Ղալիբ Վարդանյանը, ԱԻՄ-ից՝ Պարույր Հայրիկյանը, ՀՀԸ-ից՝ ԳԽ նախագահի տեղակալ Բաբկեն Արարքյանը: Վերջինիս էլ վիճակված էր դառնալու վերջին Գերագույն խորհրդի վերջին նախագահը:

Ելնելով նախագահական ընտրությունների արդյունքներից՝ եզրակացնելի է, որ սովյալ ժամանակափուլում հանրապետության քաղաքական ասպարեզի առաջատար ուժը ՀՀԸ-ն էր, որին իրենց կշռով հաջորդում էին ԱԻՄ-ը, ՀՅԴ-ն, ՀՀԿ-ն, ՍԻՄ-ը և այլն: Բայց և այնպես, նախագահական ընտրությունների քվեարկությունը հաճախ կախված է թեկնածուի անձից և անհատական հատկանիշներից: Ուստի պատահական չէ, որ այս ընտրություններից հետո հաճախ էին հնչում կարծիքներ, ըստ որոնց՝ ՀՀԸ-ն այդքան բարձր տոկոսներ չէր ստանա, ինչպես որ ստացավ Տեր-Պետրոսյանը՝ պայմանավորված իր անձնական հեղինակությամբ: [29] Բացի այդ, ՀՀԸ-ի գաղափարախոս Վազգեն Մանուկյանի և նրա կողմնակիցների՝ կուսակցությունից հեռանալու գործընթացը դեռ վերջնականապես ավարտին չէր հասել: Միով բանիվ՝ նախագահական ընտրություններին կուսակցությունը մոտեցել էր դեռևս վերջնականապես չպառակտվածի կարգավիճակով:

Ուշագրավ է, որ Հանրապետության առաջին նախագահի ընտրության արդյունքը չվիճարկվեց հետագայի հայաստանյան քաղաքական ավանդույթներով, երբ հաղթող չհռչակված թեկնածուի կողմնակիցները հավաքվում էին մայրաքաղաքի հրապարակներում՝ պահանջելով ընտրության արդյունքների չեղարկում: Նախագահական այս ընտրությունների արձանագրված արդյունքները որևէ մեկի կողմից չվիճարկվեցին, թերևս - բացառությունը երկրորդ տեղում հանգրվանած ԱԻՄ ղեկավար Պարույր Հայրիկյանն էր: Մյուս թեկնածուներն ավելի ըմբռնողական մոտեցում ցուցաբերեցին: ԱԻՄ նախագահի հետ ընտրություններին որպես փոխնախագահի թեկնածու առաջադրված ՀԲԺՄ ղեկավար Ազատ Արշակյանը հայտարարում էր, որ Տեր-Պետրոսյանի հաղթանակը պարզապես նախորդ իրողությունների վավերացումն էր: [30] Ռաֆայել Ղազարյանը ևս անակնկալի չէր եկել ընտրությունների արդյունքներից: [31] Իսկ ՀՀԿ թեկնածու Աշոտ Նավասարդյանը իրադրությանը մոտենում էր իրատեսորեն՝ պնդելով, որ ինքը հաղթելու հույս չի էլ ունեցել: Ըստ նրա՝ հետընտրական իրադարձությունների կիզակետում պիտի լինեին առողջ ընդդիմություն ստեղծելը, որը նախագահին սատար կկանգներ և կմատնանշեր նրա թերությունները: [32] ՀՅԴ կուսակցությունն իր պաշտոնաթերթի՝ «Երկիրի» խմբագրականի միջոցով շնորհավորեց Լևոն Տեր-Պետրոսյանին ՀՀ առաջին նախագահ ընտրվելու կապակցությամբ՝ մաղթելով, որ «համայն հայ ժողովրդի ուժերով հաջողվի լուծել մեր ազգի առջև ծառայած բոլոր հիմնահարցերը»: [33]

Պարույր Հայրիկյանն ու նրա կողմնակիցներն էլ, հայտարարություններից ու կոչերից զատ, բավարարվեցին սոսկ սև դրոշներ ծածանելով, սգո երթ անցկացնելու քայլով՝ ի նշան նախագահական ընտրություններում իրենց առաջնորդի պարտության: [34] ԱԻՄ-ի Վերահսկիչ հանձնաժողովը նաև հայտարարություն էր տարածել՝ շեշտելով, որ «ընտրություններն ուղեկցվել են «ՀՀ նախագահական ընտրությունների մասին» օրենքի և միջազգային ընդունված չափանիշների կոպիտ խախտումներով: Ընտրություններն ապօրինի են և հետևաբար՝ անվավեր»: Դրա հետ մեկտեղ՝ ԱԻՄ-ը ձեռնամուխ էր լինելու կազմակերպչական հարցերի կարգավորմանը, Հայաստանում մասնաճյուղեր բացելու գործին: [35]

ԱՍՓՈՓՈՒՄ

Արձանագրելի է, որ բազմակուսակցական համակարգի հաստատումից անմիջապես հետո անցկացվեց նախագահի առաջին ընտրությունը՝ ուրվագծելով այն ուղին, որով պիտի ընթանար հանրապետության քաղաքական կյանքի զարգացումը: Նախագահական 1991թ. ընտրությունները բազմակուսակցական համակարգի առաջին քննությունն էին, որին մասնակցող եւ 1-3-րդ հորիզոնականները զբաղեցրած թեկնածուները ներկայացնում էին քաղաքական բեմի ազդեցիկ կուսակցությունները՝ Հայոց համագգային շարժումը, Ազգային ինքնորոշում միավորումը և Հայ հեղափոխական դաշնակցությունը: Այս ընտրությունը Երրորդ հանրապետության պատմության մեջ մտավ «ամենաարդար» մակդիրի ուղեկցությամբ՝ ի համեմատություն կամ նույնիսկ ի հակադրություն հետագա քվեարկությունների: Ցավալիորեն, երկրորդ տեղը զբաղեցրած թեկնածուն չընդունեց ընտրությունների արդյունքների վավերականությունը ու այդպես էլ չընդունեց ընտրյալ նախագահին: Այս հանգամանքը թողեց իր բացասական նախադեպը Հայաստանի քաղաքական կյանքի զարգացման ընթացքի վրա: Թեպետ ընտրությունը լիովին օրինական էր և հատկապես՝ լեգիտիմ, այսինքն՝ լիովին ընդունելի հասարակության մեծամասնության դիտանկյունից, սակայն քաղաքական մշակույթի հիմք դնող, ավանդույթ ձևավորող այդչափ նշանակալից քայլը, այնուամենայնիվ, ի կատար չածվեց: Հարկ է արժանին մատուցել ՀՅԴ-ին, որ գաղափարական բուռն հակադրության մեջ լինելով ՀՀԸ-ի և անհատապես Տեր-Պետրոսյանի հետ, իր մեջ ուժ գտավ շնորհավորելու նրա հաղթանակը:

Ամփոփելով՝ հիմնավոր է թվում այն կարծիքը, որ նախագահական կառավարմամբ պետություններում բազմակուսակցական համակարգի արմատավորումն ավելի բարդ է, քան երկկուսակցականինը:³⁶ Այս առումով Հայաստանը կարծես բացառություն չկազմեց, եթե հաշվի ենք առնում պարագան, որ բազմակուսակցական համակարգի ներդրումից 8 ամիս անց հանրապետությունն ընտրեց իր առաջին նախագահին՝ աստիճանաբար հեռանալով կառավարման խորհրդարանական կերպից: Գուցե հայաստանյան առանձնահատկությունները, ինչպես օրինակ՝ հարևաններ Ադրբեջանի հետ խորացող ռազմական հակամարտությունը, Թուրքիայի հետ անընդհատ փոթորկվող հարաբերությունները, աշխարհաքաղաքական զանազան գործոնների հետ համատեղմամբ, արդարացնում էին ուժեղ նախագահական ինստիտուտ ունենալու ձգտումը: Այնուամենայնիվ, բազմակուսակցական համակարգի արմատավորման առումով նախագահական կառավարումը հաստատապես շատ ավելի դրական դերակատարություն չունեցավ՝ ներքաղաքական ձգնաժամերի հաղթահարման քաղաքական արդյունավետ մեխանիզմների ու գործիքների ներդրման տեսնակյունից: Շեշտելի է, սակայն, անհատականությունների դերը, որ ավելի է ընգծվում նախագահական համակարգում: Միով բանիվ՝ բազմակուսակցական համակարգի առաջին քննությունը Հայաստանը հանձնեց հենց այս ընտրությամբ՝ հանձին ակտիվ ընտրարշավի, քաղաքական ու գաղափարական սուր պայքարի, ինչպես նաև ընտրության խաղաղ ելքի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետություն», 26 հունիսի 1991:
2. «Հայաստանի Հանրապետություն», 10 օգոստոսի 1991:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ:

- Ընդհանուր խմբագրությամբ` Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. Եր., 2010, էջ 31:
4. Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013, էջ 132:
 5. Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում (Ելույթների և հոդվածների ժողովածու), «Վ.Ի.Վ. Այսօր և վաղը», Եր., 2002, էջ 248:
 6. Հարությունյան Ս., Անցյալի և ներկայի մասին, Եր., 2011, էջ 334:
 7. "Независимая газета" (Собрание), No 13, 1991.
 8. Cristian Science Monitor, 7 May 1991.
 9. Սարգսյան Ա., Լևոն Տեր-Պետրոսյան` Հիմնադիր-Նախագահ Հայաստանի Հանրապետության, Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, 665-709, էջ 678:
 10. «Ազգ», 16 սեպտեմբերի 1991:
 11. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 53:
 12. Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի (Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երևան, 2006, էջ 242:
 13. Նույն տեղում:
 14. «Արաբատ», Բեյրութ, հոկտեմբեր 1991:
 15. Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերները. Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր; թարգմ. Հ. Հարությունյան, <Արմատե ԺԲՀԶԿ, Երևան, Նաիրի, 1999, էջ 18:
 16. Պարույր Հայրիկյան, Ինքնակենսագրություն, 2013: Հասանելի է` www.hayrikyan.com/index.php/2013-11-15-08-21-03/ (առ` 07.09.2016):
 17. «Հայք», 27 փետրվարի 1991:
 18. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183. ց. 1, գ. 58:
 19. «Երկիր», 10 սեպտեմբերի 1991:
 20. «Հայք», 8 հոկտեմբերի 1991:
 21. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 207, ց. 64, գ. 240:
 22. «Երկիր», 27 օգոստոսի 1991:
 23. «Հայք», 8 հոկտեմբերի 1991:
 24. «Երկիր», 20 սեպտեմբերի 1991:
 25. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 55:
 26. Մանրամասն տես` Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 54:
Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 56:
 27. Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 132:
 28. Ամբողջական պատկերը, կից արձանագրություններով և համապատասխան այլ փաստաթղթերով, Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1183, ց. 1, գ. 52:
 29. Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 248:
 30. «Երկիր», 18 հոկտեմբերի 1991:
 31. Նույն տեղում:
 32. Նույն տեղում:
 33. «Երկիր», 18 հոկտեմբերի 1991:
 34. Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 682:
 35. «Երկիր», 24 հոկտեմբերի, 1991:
 36. Mainwaring S., Presidentialism, Multy-Party systems, and Democracy: The Difficult Equation, Kellogg Institute, The Helen Kellogg Institute for International Studies, 1990, p. 3.
 37. Epstein L., Political Parties in Western Democracies. New York: Praeger. 1967, p. 23-24:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

1991թ. ՀՀ հախագահական ընտրությունները՝ որպես բազմակուսակցական համակարգի առաջին քննություն Նժդեհ Հովսեփյան

Հայաստանում բազմակուսակցական համակարգի ներդրումից կարճ ժամանակ անց՝ 1991թ. հոկտեմբերի 16-ին, կայացան նախագահական առաջին ընտրությունները՝ դառնալով ներմուծված նոր ժողովրդավարության առաջին փորձությունը: Հայոց նոր պետականությունը ոչ միայն կարողացավ հաղթահարել անմիջական ժողովրդավարության առաջին ալիքը, այլև ազգային միասնության լրջագույն նվաճում արձանագրել: Ասպարեզում գտնվող բոլոր կուսակցություններն իրենց առաջնորդներին առաջադրեցին որպես նախագահի թեկնածու՝ քաղաքացիներին ներկայացնելով պետության կառուցման սեփական տեսլականը:

SUMMARY

Presidential Elections of Armenia in 1991 as an Earliest Trial For Multi-Party System
Nzhdeh Hovsepian

Keywords: presidential elections, multi-party system, the Third Republic Of Armenia, Post-Soviet transformation, USSR collapse, political parties

Shortly after the foundation of multi-party system in Armenia, the country held its first presidential election on October 16, 1991, which became the earliest test of a newly implemented democracy. The newly established Armenian statehood not only succeeded in overcoming first wave of direct democracy, but also achieved a new level of national unity.

РЕЗЮМЕ

Президентские выборы Армении в 1991 году в качестве первого экзамена
многопартийной системы
Нжде Овсепян

Ключевые слова: президентские выборы, многопартийная система, Третья Армянская Республика, постсоветская трансформация, распад СССР, политические партии

Вскоре после создания многопартийной системы в Армении, в стране прошли первые президентские выборы 16 октября 1991 года, которые стали самым ранним испытанием внедренной демократии. Почти все наиболее представительные политические деятели принимали активное участие в этих выборах. Политические партии представили свои перспективы и стратегию развития государства, давая населению надлежащую возможность выбирать среди них.